ՀՊՏՀ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի սեպտեմբերմեկյան շնորհավորանքը

Սիրելի առաջին կուրսեցինե՛ր, ուսանողներ, ծնողներ, գործընկերներ,
այսօր հիշարժան օր է բոլորիս կյանքում: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ընդունվելու և Գիտելիքի տոնի առիթով շնորհավորում եմ բոլորիս և հատկապես առաջին կուրսեցիներին, գիտելիքի մեր մեծ տանը բոլորիս մաղթում եմ բարեբեր գործունեություն:

Ինչպես գիտեք, երեկ՝ ուսումնական տարվան ընդառաջ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսը օրհնեց կրթության նվիրյալներին, որպեսզի գիտության ու կրթության մշակները, սերունդներ կրթող մասնագետներն ամենայն պատասխանատվությամբ և մեծ սիրով կատարեն իրենց աշխատանքը: Այո, կրթությունն առաջ է տանում մեր լուսավորության ու առաջընթացի ջահը, և մեր ջանքերը պետք է միավորենք հանուն մեր պայծառ վաղվա օրվա:

Սիրելի առաջին կուրսեցինե՛ր, դուք ապրել եք մանկության ու պատանեկության շատ հիշարժան օրեր, սակայն, հավաստիացնում եմ՝ ձեր լավագույն օրերը դեռ առջևում են:

Մեր համալսարանում դուք ստանալու եք բարձրորակ մասնագիտական գիտելիքներ, ձեր կրթության ու հետագա դաստիարակության հարցում շահագրգիռ է ողջ համալսարանական կազմը: Եվ այդ գիտելիքները վճռորոշ են լինելու ձեր հետագա կայացման ճանապարհին: Սակայն բարձրագույն դպրոցը միայն մասնագիտական կրթություն չէ, այստեղ ձևավորվելու և զարգանալու է ձեր արժեքային համակարգը, դուք քաղելու եք նաև կյանքի դասեր՝ լավատեսության, մարդասիրության, ազնվության: Ժամանակակից տեխնոլոգիաների, հարաճուն առաջընթացի մեր ժամանակաշրջանում ինքնահաստատվելու ու կայանալու համար ձեզանից պահանջվելու են մեծ ջանքեր՝ աշխատասիրություն, հաստատակամություն ու նպատակասլացություն: Եվ ձեր ջանքերը, վստահաբար, արդարացվելու են:

Ուստի հորդորում եմ, որ ձեր կյանքի այս հրաշալի տարիները ապրեք գեղեցիկ ու բովանդակալից: Ուսումնական և ուսանողական ձեռքբերումներ կերտելու համար հարկավոր է արագորեն ինտեգրվել բուհական կյանքին՝ ուսումնական, գիտական, մարզական ու մշակութային, համագործակցել համալսարանի ուսանողական ինքնավար կառույցի՝ ուսանողական խորհրդի հետ:

Կրկին շնորհավորում եմ ու բարի երթ մաղթում, այսօրվանից սկսեք կերտել ձեր լուսավոր ու արժանապատիվ ապագան: